# ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՆՄԲԿ-ՊՇՁԲ-26/35-3

ք.Երևան 20.01. 2026թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ս. Ադամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ, ի դեմս տնօրեն Բ. Թադևոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորություն (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպայման որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս կողմից մատուցված պատշաճ ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու պատշաճ մատուցված ծառայության դիմաց վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության պատշաճ մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 12 000 000 (տասներկու միլիոն ) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է պայմանագրի 3-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում՝ ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված պայմաններով, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարվում է սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն սահմանված ժամկետում չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորություններն ամբողջությամբ և պատշաճ՝ պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնական է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի գրավոր առաջարկի առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի համար ծառայության մատուցման պահանջը չի վերացել, իսկ Կատարողի գրավոր առաջարկը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավելի քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման շրջանակներից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելու հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.12 Կատարողն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կատարողի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 4) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից բանկին վճարման հանձնարարական տալու օրվան նախորդող օրը:

7.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.15 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100

-----------------------------------------
(ստորագրություն)

Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ
ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՎՀՀ 01210095
Հ/Հ 2481001168180025
«Արդշինբանկ» ՓԲԸ
lawyer@c-e.am
011-87-87-17
Բ. Թադևոսյան

-----------------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*

*«20» 01 2026 թ. կնքված*

*ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/35-3 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| Չափաբաժնի համարը | CPV կոդը | Գնման առարկայի անվանումը | Չափման միավորը | Միավորի գինը | Գնման ենթակա քանակները 2026թ. | Ընդհանուր արժեք ՀՀ դրամով |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 50421100/506 | Cobas 311 լաբորատոր վերլուծիչի վերանորոգման և պահպանման ծառայություններ | դրամ | 4000000 | 1 | 4000000 |
| 2 | 50421100/507 | Cobas b221 լաբորատոր վերլուծիչի վերանորոգման և պահպանման ծառայություններ | դրամ | 4000000 | 1 | 4000000 |
| 4 | 50421100/509 | Hamilton C1 արհեստական շնչառության սարքավորման վերանորոգման և պահպանման ծառայություններ | դրամ | 4000000 | 1 | 4000000 |

| | Չ/մ | Միավորի գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Չափաբաժին 1՝ Cobas 311 լաբորատոր վերլուծիչի վերանորոգման և պահպանման ծառայություններ | | |
| Դիագնոստիկա և խնամք | | |
| ԾԱ-ի տեղադրում և կարգաբերում | հատ | 140 000 |
| ԾԱ-ի թարմեցում շտեմարանների ներբեռնում | հատ | 80 000 |
| Մեխանիկական կարգաբերում | հատ | 180 000 |
| Կրկնողականության ստուգում | հատ | 120 000 |
| Շարժական մասերի քսուկապատում | հատ | 72 000 |
| Սխալների (error) արտահանում ԾԱ-ի միջոցով սխալների ուղղում | հատ | 60 000 |
| 12 ամսվա տեխնիկական խնամքի իրականացում (ներառյալ անհրաժեշտ պահեստամասերը) | հատ | 1 080 000 |
| 6 ամսվա տեխնիկական խնամքի իրականացում (ներառյալ անհրաժեշտ պահեստամասերը) | հատ | 480 000 |
| Հիմնական համակարգի սպասարկում | | |
| Ուլտրաձայնային խառնիչի փոխարինում | հատ | 96 000 |
| Արյան նմուշառման մխոցի ներդիրների փոխարինում | հատ | 12 000 |
| Էլեկտրոլիտների մխոցի ներդիրների փոխարինում | հատ | 12 000 |
| Ազդանյութի մխոցի ներդիրների փոխարինում | հատ | 12 000 |
| Արյան նմուշառման ասեղի փոխարինում | հատ | 24 000 |
| Էլեկտրոլիտների ասեղի փոխարինում | հատ | 12 000 |
| Ազդանյութի ասեղի փոխարինում | հատ | 24 000 |
| Լվացողկայանիփոխարինում | հատ | 120 000 |
| Լվացող կայանի խողովակների փոխարինում | հատ | 160 000 |
| Լվացող կայանի ասեղի փոխարինում | հատ | 12 000 |
| Լվացող հեղուկի (թթվային) փականի փոխարինում | հատ | 36 000 |
| Լվացող հեղուկի (հիմնային) փականի փոխարինում | հատ | 36 000 |
| Սարքին միացված ջրի արտահոսքի ստուգում և հայտնաբերում | հատ | 96 000 |
| Վակուում պոմպի փոխարինում | հատ | 96 000 |
| Վակուում պոմպի մեմբրանների փոխարինում | հատ | 48 000 |
| Օդի զտիչների փոխարինում | հատ | 12 000 |
| Բարկոդ սկաների փոխարինում | հատ | 120 000 |
| Սենսոր LH10HH-ի փոխարինում | հատ | 7 200 |
| Սենսոր LF10HH-ի փոխարինում | հատ | 7 200 |
| Ճնշման սենսորի փոխարինում | հատ | 36 000 |
| Նմուշառման ասեղի լվացող կայանի փոխարինում | հատ | 24 000 |
| Ֆոտոմետրի մոդուլի փոխարինում | հատ | 180 000 |
| Ռեակցիոն խցիկի փոխարինում | հատ | 180 000 |
| Էլեկտրոլիտների նմուշառման մեխանիզմի փոխարինում | հատ | 120 000 |
| Էլեկտրոլիտների նմուշառման ասեղի զգայունության սալիկի փոխարինում | հատ | 36 000 |
| Արյան նմուշառման մեխանիզմի փոխարինում | հատ | 240 000 |

| | | |
|---|---|---|
| Արյան նմուշառման ասեղի զգայունությա նսալիկի փոխարինում | հատ | 48 000 |
| Հովացուցիչի փոխարինում | հատ | 12 000 |
| Ներկառուցված հոսանքի բաշխիչի փոխարինում | հատ | 60 000 |
| Օդի թակարդի փոխարինում | հատ | 9 600 |
| Ջրի պոմպի փոխարինում | հատ | 18 000 |
| Ապրանքների փոխարինում | | |
| Արյաննմուշառմանմխոցիներդիրներ | հատ | 36 000 |
| Էլեկտրոլիտներիմխոցիներդիրներ | հատ | 36 000 |
| Ազդանյութիմխոցիներդիրներ | հատ | 36 000 |
| Արյաննմուշառմանասեղ | հատ | 636 000 |
| Էլեկտրոլիտներիասեղ | հատ | 528 000 |
| Ազդանյութիասեղ | հատ | 476 000 |
| Լվացողկայանիխողովակ | հատ | 1 260 000 |
| Լվացողկայանիասեղ | հատ | 108 000 |
| Լվացողհեղուկի (թթվային) փական | հատ | 204 000 |
| Լվացողհեղուկի (հիմնային) փական | հատ | 144 000 |
| Վակուում պոմպի մեմբրան | հատ | 132 000 |
| Օդի զտիչներ | հատ | 48 000 |
| Բարկոդ սկաներ | հատ | 1 180 000 |
| Սենսոր LH10HH | հատ | 40 800 |
| Սենսոր LF10HH | հատ | 40 800 |
| Ճնշման սենսոր | հատ | 924 000 |
| Նմուշառման ասեղի լվացող կայան | հատ | 48 000 |
| Էլեկտրոլիտների նմուշառման ասեղ | հատ | 924 000 |
| Արյան նմուշառման ասեղի զգայունության սալիկ | հատ | 912 000 |
| Հովացուցիչ | հատ | 132 000 |
| Ներկառուցված հոսանքի բաշխիչ | հատ | 540 000 |
| Օդի թակարդ | հատ | 170 400 |
| Ջրի պոմպի (MD-10K-NL45) | հատ | 262 000 |
| Հակազազային զտիչ | հատ | 816 000 |
| Վակուումի տարրա | հատ | 18 000 |
| Ուլտրաձայնային խառնիչի ռելեների սալիկ | հատ | 900 000 |
| Ազդանյութի բռնիչ | հատ | 84 000 |
| Տվիչի ամրակալ | հատ | 2 400 |
| Սենսոր DET-C4 | հատ | 24 000 |
| Ազդանյութի տեղափոխման համակարգ | հատ | 1 256 000 |
| AV1 փական | հատ | 166 000 |
| AV2 փական | հատ | 564 000 |
| Հեպաֆիլտր | հատ | 172 000 |
| Հովացուցիչ AC1-ի | հատ | 216 000 |
| SR խողովակ | հատ | 144 000 |
| Հակաստատիկ խոզանակներ | հատ | 15 000 |
| Էլեկտրոլիտների բլոկի խողովակներ | հատ | 57 000 |
| Ջրամատակարարման խողովակներ | հատ | 288 000 |
| Հովացման համակարգի խողովակներ | հատ | 84 000 |
| Տիգոն խողովակներ | հատ | 76 500 |
| Լվացող հեղուկի ասեղ | հատ | 21 600 |
| Հակազազային զտիչ | հատ | 888 000 |
| Մագնիսական պոմպ | հատ | 954 000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ (միավորների գների հանրագումարը) | | 19 682 500 |
| Չափաբաժին 2՝ Cobas b221 լաբորատոր վերլուծիչի վերանորոգման և պահպանման ծառայություններ | | |
| Դիագնոստիկա և խնամք | | |
| Դիագնոստիկա | հատ | 36 000 |
| Վերածրագրավորում | հատ | 60 000 |
| Սխալների (error) արտահանում ԾԱ-ի միջոցով, սխալների ուղղում | հատ | 84 000 |
| 12 ամսվա տեխնիկական խնամքի իրականացում (ներառյալ անհրաժեշտ պահեստամասերը) | հատ | 480 000 |
| 36 ամսվա տեխնիկական խնամքի իրականացում (ներառյալ անհրաժեշտ պահեստամասերը) | հատ | 960 000 |
| Հիմնական համակարգի սպասարկում | | |
| Նմուշառման ասեղի փոխարինում | հատ | 9 600 |
| Լիցքային պորտի փոխարինում | հատ | 9 600 |
| Օդի զտիչի փոխարինում | հատ | 8 400 |
| Հեմոգլոբինի կյուվետի փոխարինում | հատ | 12 000 |
| Հեմոգլոբինի կյուվետի ներդիրների փոխարինում | հատ | 9 600 |
| COOX կյուվետի փոխարինում | հատ | 96 000 |
| Էլեկտրոդ Scon-ի փոխարինում | հատ | 12 000 |
| Էլեկտրոդ Na-ի փոխարինում | հատ | 12 000 |
| Էլեկտրոդ Cl-ի փոխարինում | հատ | 12 000 |

| | | |
|---|---|---|
| Էլեկտրոդ K-ի փոխարինում | հատ | 12 000 |
| Էլեկտրոդ Ca-ի փոխարինում | հատ | 12 000 |
| Ռեֆերենս էլեկտրոդի փոխարինում | հատ | 12 000 |
| Միկրոէլեկտրոդ PO2-ի փոխարինում | հատ | 12 000 |
| Միկրոէլեկտրոդ PH-ի փոխարինում | հատ | 12 000 |
| Միկրոէլեկտրոդ PCO2-ի փոխարինում | հատ | 12 000 |
| Պերիստատիկ պոմպի փոխարինում | հատ | 12 000 |
| Վակուում պոմպի փոխարինում | հատ | 48 000 |
| Վակուումի ջրի թակարդի փախարինում | հատ | 24 000 |
| Վակուում պոմպի կառավարման սալիկի փոխարինում | հատ | 36 000 |
| Մայրական սալիկի փոխարինում | հատ | 60 000 |
| Փականի փոխարինում | հատ | 24 000 |
| Վակուումի խողովակների փոխարինում | հատ | 18 000 |
| Բաշխիչ մոդուլի փոխարինում | հատ | 36 000 |
| Բաշխիչ մոդուլի սկավառակի փոխարինում | հատ | 24 000 |
| Բաշխիչ մոդուլի տվիչի փոխարինում | հատ | 24 000 |
| Բաշխիչ մոդուլի սալիկի փոխարինում | հատ | 18 000 |
| Մուտքային խողովակի փոխարինում (SIP) | հատ | 12 000 |
| Նմուշառման ասեղի փոխարինում | հատ | 12 000 |
| Գազերի բաշխիչ մոդուլի փոխարինում | հատ | 60 000 |
| Էլեկտրոլիտների բաշխիչ մոդուլի փոխարինում | հատ | 60 000 |
| Հեմոգլոբինի մոդուլի փոխարինում | հատ | 60 000 |
| Ազդանյութի ամրակալի փոխարինում | հատ | 12 000 |
| Չափիչ խցիկի փոխարինում | հատ | 36 000 |
| Ապրանքների փոխարինում | | |
| Նմուշառման ասեղ | հատ | 36 000 |
| Լիցքային պորտ | հատ | 36 000 |
| Օդի զտիչ | հատ | 9 600 |
| Հեմոգլոբինի կյուվետ | հատ | 120 000 |
| Հեմոգլոբինի կյուվետ ներդիր | հատ | 3 600 |
| Էլեկտրոդ Scon | հատ | 48 000 |
| Էլեկտրոդ Na | հատ | 144 000 |
| Էլեկտրոդ Cl | հատ | 96 000 |
| Էլեկտրոդ K | հատ | 120 000 |
| Էլեկտրոդ Ca | հատ | 120 000 |
| Ռեֆերենս էլեկտրոդ | հատ | 300 000 |
| Միկրոէլեկտրոդ PO2 | հատ | 264 000 |
| Միկրոէլեկտրոդ PH | հատ | 144 000 |
| Միկրոէլեկտրոդ PCO2 | հատ | 319 000 |
| Պերիստատիկ պոմպ | հատ | 36 000 |
| Վակուում պոմպ | հատ | 960 000 |
| Վակուումի ջրի թակարդ | հատ | 36 000 |
| Վակուում պոմպի կառավարման սալիկ | հատ | 360 000 |
| Փական | հատ | 240 000 |
| Վակուումի խողովակ | հատ | 36 000 |
| Բաշխիչ մոդուլի սկավառակ | հատ | 36 000 |
| Բաշխիչ մոդուլի տվիչ | հատ | 36 000 |
| Բաշխիչ մոդուլի սալիկ | հատ | 120 000 |
| Մուտքային խողովակ (SIP) | հատ | 96 000 |
| Նմուշառման ասեղ | հատ | 36 000 |
| Ազդանյութի ամրակալ | հատ | 48 000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ (միավորների գների հանրագումարը) | | 6 249 400 |
| Չափաբաժին 4՝ Hamilton C1 արհեստական շնչառության սարքավորման վերանորոգման և պահպանման ծառայություններ | | |
| Դիագնոստիկա և խնամք | | |
| Դիագնոստիկա | հատ | 48 000 |
| Վերածրագրավորում | հատ | 144 000 |
| Կարգաբերում | հատ | 120 000 |
| 12 ամսվա տեխնիկական խնամքի իրականացում (ներառյալ անհրաժեշտ պահեստամասերը) | հատ | 480 000 |
| Հիմնական համակարգի սպասարկում | | |
| Հոսքի տվիչի փոխարինում | հատ | 12 000 |
| Արտաշնչման մեմբրանի փոխարինում | հատ | 12 000 |
| Հեպաֆիլտրի փոխարինում | հատ | 12 000 |
| Օդի հոսքի տվիչի փոխարինում | հատ | 60 000 |
| Թթվածնի հոսքի տվիչի փոխարինում | հատ | 24 000 |
| Ներշնչման ներկառուցված փականի փոխարինում | հատ | 72 000 |
| Արտաշնչման ներկառուցված փականի փոխարինում | հատ | 96 000 |
| Մտնոլորտային փականի փոխարինում | հատ | 84 000 |
| Ճնշման տվիչների հավաքածուի փոխարինում | հատ | 96 000 |

| | | |
|---|---|---|
| Հովացուցիչի փոխարինում | հատ | 36 000 |
| Մարտկոցի փոխարինում | հատ | 36 000 |
| Ապրանքների փոխարինում | | |
| Հոսքի տվիչ | հատ | 24 000 |
| Արտաշնչման մեմբրան | հատ | 24 000 |
| Հեպաֆիլտր | հատ | 48 000 |
| Օդի հոսքի տվիչ | հատ | 240 000 |
| Թթվածնի հոսքի տվիչ | հատ | 180 000 |
| Ներշնչման ներկառուցված փական | հատ | 600 000 |
| Արտաշնչման ներկառուցված փական | հատ | 600 000 |
| Մտնոլորտային փական | հատ | 360 000 |
| Հովացուցիչ | հատ | 84 000 |
| Մարտկոց | հատ | 180 000 |
| ԸՆԴԱՄԵՆԸ (միավորների գների հանրագումարը) | | 3 672 000 |

**Բոլոր չափաբաժինների համար.**

Ծառայությունները սկսվում են մատուցվել պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրվանից, կամ ավելի վաղ, եթե դրան համաձայն է Կատարողը: Պայմանագրի գործողության ժամկետը՝ մինչև 31.12.2026թ.:

Ծառայությունների մատուցման վայրը հանդիսանում է ք. Երևան, Ա. Արմենակյան 108/4 հասցեն:

Սարքի խափանման դեպքում դիագնոստիկան և խափանման հայտնաբերումը պետք է իրականացվի կանչի պահից սկսած առավելագույնը 24 ժամվա ընթացքում, ներառյալ ոչ աշխատանքային օրերը, 24/7/360 ռեժիմում:

Կատարողը պետք է ունենա համապատասխան մասնագետներ(որակավորված) և տեխնիկական միջոցներ՝ ծառայությունների որակյալ իրականացման համար:

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ | <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ |
| ք. Երևան, Արմենակյան 108/4 | ք. Երևան, Արզումանյան 32-10 |
| ՀՎՀՀ 01508793 | ՀՎՀՀ 01210095 |
| <<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ | «Արդշինբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 1150001612200100 | Հ/Հ 2481001168180025 |
| | lawyer@c-e.am |
| | 011-87-87-17 |
| | Բ. Թադևոսյան |
| ---------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ. | ---------------------------------- /ստորագրություն/ Կ.Տ. |

Հավելված N 2
«20» 01 2026 թ. կնքված
ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/35-3 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Գնման առարկայի | | | |
|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թ-ին՝ ըստ որում |
| 1 | 50421100/506 | Cobas 311 լաբորատոր վերլուծիչի վերանորոգման և պահպանման ծառայություններ | |
| 2 | 50421100/507 | Cobas b221 լաբորատոր վերլուծիչի վերանորոգման և պահպանման ծառայություններ | ֆինանսական միջոցները նախատեսված են: ֆինանսական միջոցները հատկացվելու են սահմանված կարգով Ծառայություններն ընդունելու օրվան հաջորդող 60 օրվա ընթացքում և վճարումն իրականացվելու է 5 աշխատանքային օրում: |
| 4 | 50421100/509 | Hamilton C1 արհեստական շնչառության սարքավորման վերանորոգման և պահպանման ծառայություններ | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

<<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ
ք. Երևան, Արմենակյան 108/4
ՀՎՀՀ 01508793
<<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ
Հ/Հ 1150001612200100

-----------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**

<<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ
ք. Երևան, Արզումանյան 32-10
ՀՎՀՀ 01210095
Հ/Հ 2481001168180025
«Արդշինբանկ» ՓԲԸ
lawyer@c-e.am
011-87-87-17
Բ. Թադևոսյան
-------------------
/ստորագրություն/
Կ.Տ.

Հավելված 3
«20» 01 2026 թ. կնքված
ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/35-3 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ Պատվիրատու

_______________________ _______________________

_______________________

գտնվելու վայրը գտնվելու վայրը

հհ _______________________ հհ _______________________

հվհհ _______________________ հվհհ _______________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ ______________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «____________» 20 թ.

Պայմանագրի համարը՝ ____________

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | Մատուցված ծառայությունների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց Ծառայությունն ընդունեց

_______________________ _______________________

ստորագրություն ստորագրություն

_______________________ _______________________

ազգանուն, անուն ազգանուն, անուն

Կ.Տ. Կ.Տ.

*Հավելված 3.1*
*«20» 01 2026 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/35-3 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ____________-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ______________________ -ին կնքված N ________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

| Հանձնեց | Ընդունեց<br>հայտը նախագծած ներկայացուցիչ՝ |
|---|---|
| ______________________<br>ազգանուն, անուն | ______________________<br>ազգանուն, անուն |
| ______________________<br>ստորագրություն | ______________________<br>ստորագրություն |

*Հավելված 4*
*«20 » 01 2026 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԳՀԾՁԲ-26/35-3 ծածկագրով պայմանագրի*

ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________հայտնում է, որ.
ֆինանսական գործակալիանվանումը

1. ________________________________-ի և ___________________________-ի միջև«--» 20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը կատարողի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և

_________________________-իմիջև «----» 20 թ-ին կնքվել է «---------------------» ծածկագրով ֆակտորինգի
կատարողի անվանումը

պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 7.12 կետով սահմանված պահանջներին:

_____________________________________________ _______________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)
ստորագրությունը

Կ. Տ.(առկայության դեպքում)

«--» 20 թ.